



Բեյ-Փի-Էմ-Ջի

Իրազեկում

Փետրվար
2025

2024 թվականի դեկտեմբերի 4-ին ՀՀ Ազգային ժողովը ընդունեց «Բարձր տեխնոլոգիաների աջակցության մասին» (ՀՕ-498-Ն) և «ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (ՀՕ-499-Ն) օրենքները, որոնցով սահմանվեցին բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության ծրագրեր և հարկային արտոնություններ:

Ի՞նչ պետական աջակցություններ են սահմանվել «Բարձր տեխնոլոգիաների աջակցության մասին օրենքով

Աջակցությունները տրամադրվում են բարձր տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն իրականացնող ՀՀ-ում գրանցված առևտրային կազմակերպություններին և ՀՀ-ում հաշվառված անհատ ձեռնարկատերերին, որոնց շրջանառությունը առնվազն 90%-ով ձեւավորվում է բարձր տեխնոլոգիաների ոլորտի գործունեության տեսակներից:

- Աջակցության տեսակներն են՝
- Աջակցություն աշխատանքային միգրանտների համար
 - Աջակցություն նոր աշխատողների ներգրավման համար
 - Աջակցություն կադրերի պատրաստման և վերապատրաստման համար

Ո՞րն է աշխատանքային միգրանտների համար տրվող աջակցությունը

Աշխատողների շրջանակ	Կիրառելի է օտարերկրյա քաղաքացիներ կամ քաղաքացիություն չունեցող եւ Հայաստանի Հանրապետությունում օրինական աշխատանքային իրավունք ունեցող մասնագիտական աշխատանք կատարող վարձու աշխատողների նկատմամբ
Աջակցության չափ	Եկամտային հարկի 60%-ի չափով փոխհատուցում
Աջակցության տրամադրման ժամկետ	• Մինչև 31.12.2025թ. փոխհատուցվում է կազմակերպությանը • 01.01.2026-31.12.2031թթ փոխհատուցվում է աշխատողին

Ո՞րն է Նոր աշխատողների համար տրվող աջակցությունը

Աշխատողների շրջանակ	Կիրառելի է առաջին անգամ բարձր տեխնոլոգիաների ոլորտ մուտք գործած եւ մասնագիտական աշխատանք կատարող վարձու աշխատողների նկատմամբ
Աջակցության չափ	Եկամտային հարկի 60%-ի չափով փոխհատուցում
Աջակցության տրամադրման ժամկետ	01.01.2025-31.12.2031թթ. փոխհատուցվում է կազմակերպությանը <i>Տրամադրվում է վարձու աշխատողի՝ առաջին անգամ մասնագիտական աշխատանքի անցնելու պահից երեք օրացուցային տարիների համար</i>

Ո՞րն է կադրերի պատրաստման և վերապատրաստման համար տրամադրվող աջակցությունը

Աշխատողների շրջանակ	Կիրառելի է վերապատրաստում անցած մասնագիտական աշխատանք կատարող վարձու աշխատողների համար
Աջակցության չափ	Եկամտային հարկի 50% չափով փոխհատուցում
Աջակցության տրամադրման ժամկետ	01.01.2025-31.12.2031թթ. փոխհատուցվում է կազմակերպությանը <i>Տրամադրվում է հաշվետու եռամսյակի համար</i>

Վերոնշյալ պետական աջակցությունների հանրագումարը չի կարող գերազանցել նույն հաշվետու ժամանակաշրջանի մասով տվյալ կազմակերպության բոլոր աշխատողների գծով հաշվարկված եկամտային հարկի գումարի 50 տոկոսը:



Ի՞նչ հարկային արտոնություններ են սահմանվել «ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքով

Արտոնությունները տարածվում են բացառապես Կառավարության կողմից սահմանված՝ բարձր տեխնոլոգիաների ոլորտի գործունեության տեսակների ցանկում ներառված (**ցանկը դեռևս հաստատված չէ**) գործունեությամբ զբաղվող առևտրային կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի վրա:
Արտոնություններն են՝

- Եկամտային հարկի մասով արտոնություն
- Շահութահարկի մասով արտոնություն
- Շրջանառության հարկի մասով արտոնություն

Արտոնությունները ուժի մեջ են 01.01.2025-31.12.2031թթ ընկած ժամանակահատվածի համար, բացառությամբ աշխատավարձի գծով ծախսերի հավելյալ նվազեցման արտոնության որը տարածվում է նաև 2024թ. վրա:

Ո՞րն է եկամտային հարկի մասով արտոնությունը

Սահմանվել է աշխատավարձի նկատմամբ եկամտային հարկի **10%** դրույքաչափ այն մասնագիտական աշխատանք կատարող աշխատակիցների մասով, ովքեր ներգրավված են մասնագիտական հանձնաժողովի **դրական եզրակացությանն** արժանացած **գիտական հետազոտությունների եւ փորձարարական մշակումների** աշխատանքներում:

Որո՞նք են շահութահարկի մասով արտոնությունները

Շահութահարկի մասով արտոնություններն են՝

- Ստացված նպատակային դրամական միջոցների (դրամաշնորհ) եկամուտ ճանաչելու մասով արտոնություն
- Հիմնական միջոցների կիրառման արտոնություն
- Աշխատավարձի գծով ծախսերի հավելյալ նվազեցման արտոնություն



Ո՞րն է ստացված նպատակային դրամական միջոցների (դրամաշնորհ) եկամուտ ճանաչելու մասով արտոնությունը

Ստացված նպատակային դրամական միջոցները եկամուտ են համարվում այն հարկային տարում, երբ այդ դրամական միջոցները կամ այդ դրամական միջոցներով ձեռք բերված, կառուցարագացված մաշվածությանված, ստեղծված կամ մշակված ակտիվները ճանաչվում են որպես ծախս կամ կորուստ՝ որոշակի պայմանների բավարարելու դեպքում: Դայմաններն են՝

- տվյալ հարկային տարվա ընթացքում հայտարարագրել է մինչև 50 (ներառյալ) վարձու աշխատողներին
- Չբաղվում է բացառապես **Կառավարության սահմանած՝ բարձր տեխնոլոգիաների ոլորտի գործունեության տեսակների ցանկում** ներառված գործունեության տեսակներով, կամ եթե այլ եկամուտների տեսակարար կշիռը հարկային տարվա համախառն եկամտի մեջ չի գերազանցում 10 տոկոսը:

Ո՞րն է հիմնական միջոցների արագացված մաշվածության կիրառման մասով արտոնությունը

Կառավարության սահմանած չափանիշներին համապատասխանող և Կառավարության ձևավորած մասնագիտական հանձնաժողովի դրական եզրակացությանն արժանացած գիտական հետազոտություններ և փորձարարական մշակումների աշխատանքների շրջանակներում ամիջականորեն ռեզիդենտ շահութահարկ վճարողի կողմից ներմուծվող, ձեռք բերվող (կառուցվող, մշակվող) կամ լիզինգով (տարատեսակներով) ստացվող հիմնական միջոցների (բացառությամբ՝ **հիմնական միջոց** համարվող անշարժ գույքի) **ամորտիզացիոն նվազագույն ժամկետը** սահմանվում է ռեզիդենտ շահութահարկ վճարողի հայեցողությամբ, **բայց ոչ պակաս, քան մեկ տարի**:

Ո՞րն է աշխատավարձի գծով ծախսերի հավելյալ նվազեցման արտոնությունը

Շահութահարկի հաշվարկման նպատակով սահմանվել է հավելյալ նվազեցման հնարավորություն **մասնագիտական աշխատանքի** մասով հաշվարկված **աշխատավարձի 200% չափով**:

Արտոնությունը տրամադրվում է՝

- Եթե հարկ վճարողը զբաղվում է բացառապես Կառավարության սահմանած՝ բարձր տեխնոլոգիաների ոլորտի գործունեության տեսակների ցանկում ներառված գործունեության տեսակներով, կամ եթե այլ եկամուտների տեսակարար կշիռը հարկային տարվա համախառն եկամտի մեջ չի գերազանցում 10 տոկոսը
- կամ իրականացնում է Մասնագիտական հանձնաժողովի կողմից դրական եզրակացության արժանացած գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքներ՝ այդ աշխատանքներում ներգրավված աշխատակիցների մասով միայն:

Մասնագիտական աշխատանքի ցանկը հրապարակվում է Կառավարությունը:

Վերոնշյալ արտոնության չափը չի կարող գերազանցել շահութահարկով հարկման բազայի **50 տոկոսը**՝ առանց հաշվի առնելու նշված արտոնության գծով նվազեցումները: Այս սահմանափակումը (հարկման բազայի 50 տոկոսը չգերազանցելու մասով) չի տարածվում գիտական հետազոտություններ և փորձարարական մշակումներ իրականացնող այն ռեզիդենտ շահութահարկ վճարողների վրա, որոնք եկամուտները ստացել են բացառապես գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքներից կամ միաժամանակ ստացել են այլ եկամուտներ՝ պայմանով, որ այդ եկամուտների տեսակարար կշիռը հարկային տարվա համախառն եկամտի մեջ չի գերազանցում տասը տոկոսը:

Ո՞րն է շրջանառության հարկի մասով արտոնությունը

Օրենքով սահմանվել է, որ Կառավարության սահմանած բարձր տեխնոլոգիաների ոլորտի գործունեության տեսակների ցանկում ներառված գործունեության տեսակներից ստացվող եկամուտները հարկվում են շրջանառության հարկի 1% դրույքաչափով:

Սակայն սահմանվել է, որ շահութահարկ վճարողները շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով չեն կարող նվազեցնել Կառավարության սահմանած՝ բարձր տեխնոլոգիաների ոլորտի գործունեության տեսակների ցանկում ներառված գործունեության տեսակների մասով շրջանառության հարկ վճարողներից ձեռք բերված ապրանքների, ստացված ծառայությունների և ընդունված աշխատանքների գծով կատարվող ծախսերը:



kpmg.co.am

Սույն առաջարկը պատրաստվել է «Բեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ի կողմից, որը Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն է և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին («KPMG International») անդամակցող «Բեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ:

«KPMG International»-ը և վերջինիս կապակցված կազմակերպությունները չեն մատուցում ծառայություններ հաճախորդներին: Որևէ անդամ ընկերություն իրավասու չէ պարտադրել կամ պարտավորեցնել «KPMG International»-ին, վերջինիս կապակցված

կազմակերպություններից որևէ մեկին կամ ցանկացած այլ անդամ ընկերությանը հանձն առնել պարտականություններ երրորդ անձանց հանդեպ: «KPMG International»-ը կամ վերջինիս կապակցված կազմակերպություններն իրենց հերթին իրավասու չեն պարտադրել կամ պարտավորեցնել ցանկացած անդամ ընկերությանը հանձն առնել նման պարտականություններ:

© 2025 «Բեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Բեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

The KPMG name and logo are trademarks used under license by the independent member firms of the KPMG global organization.

Document Classification: KPMG Confidential